# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«03» 09 2020թ.
հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-249/ 2020թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ի կատարումն Ձեր 20.01.2020թ. թիվ 01/107.3/00404-2020թ. գրության.

Կից Ձեզ եմ ներկայացնում Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. սեպտեմբերի 4-ին ժամը 14:00-ին կայանալիք ավագանու արտահերթ նիստի օրակարգը և որոշումների նախագծերը:

Առդիր 7 թերթ:

Մեծ Պարնի համանքի ղեկավարի՝ ժ/պ Հ. Ցաղուբյան

ՕՐԱԿԱՐԳ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. սեպտեմբերի 4-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ. Հ. Ցաղուբյան

2. Մեծ Պարնի համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Զեկ. Հ. Ցաղուբյան

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Զեկ. Հ. Ցաղուբյան

4. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելու մասին :

Զեկ. Հ. Ցաղուբյան

Մեծ Պարնի համանքի ղեկավարի՝ ժ/պ Հ. Ցաղուբյան

ՆԱԽԱԳԻԾ

---

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2020** Թ.
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Ձեկ. Հ. Ցաղուբյան
/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Մեծ Պարնի համայնքի ավագանին

որոշում է

Հաստատել Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. սեպտեմբերի 4-ի արտահերթ նիստի օրակարգը

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2020թ. սեպտեմբերի 4-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

Ձեկ. Հ. Ցաղուբյան

2. Մեծ Պարնի համայնքի 2020 թվականի բյուջեի ծախսային մասում փոփոխություն կատարելու մասին:

Ձեկ. Հ. Ցաղուբյան

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Ձեկ. Հ. Ցաղուբյան

4. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելու մասին :

Ձեկ. Հ. Ցաղուբյան

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ.
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 -Ի << ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ.
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 41 -Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

______________________________
/ Ղեկ. Հ. Յաղուբյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 և 34 հոդվածներով `

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23 -ի << Մեծ Պարնի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 41 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

Հավելված
Մեծ Պարնիի ավագանու
«__» __________ 2020թ.
Թիվ _____-Ն որոշման

# ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | Ավելացում | Պակասեցում | Ֆոնդային բյուջե | Այդ թվում ըստ հոդվածների | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | 4111 | 4241 | | | | | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 2110 | 01 | 01 | 01 | Կառավարման ապարատ | 270 | | -270 | | 270 | | | | | | | | | | | | | | |
| 2161 | 01 | 06 | 01 | ընդհանուր բնույթի հանրայի ծառայություն | 270 | 270 | | | | 270 | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | 270 | 270 | | 270 | 270 | | | | | | | | | | | | | |

Համայնքի ղեկավարի ՝ ժ/պ Հ. Յաղուբյան

ՆԱԽԱԳԻԾ

---

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Զեկ. Հ. Յաղուբյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 10-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 4 - ի թիվ ___-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ և ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Արուսյակ Ֆելիքսի Զոթյանին 50000 /հիսուն հազար/ դրամ սոց. օգնություն
2. Վալյա Էդիկի Եթումյանին 15000 /տասնհինգ հազար/ դրամ սոց. օգնություն
3. Հովիկ Սամվելի Նազարյանին 30000 /երեսուն հազար/ դրամ սոց. օգնություն
4. Հրահատ Ռաֆիկի Ավետիսյանին 40000 /քառասուն հազար/ դրամ հուղարկավորման ծախս:
5. Սուրեն Արամայիսի Արզումանյանին 40000/քառասուն հազար/դրամ հուղարկավորման ծախս:
6. Նարինե Սենիկի Ավալյանին 40000 /քառասուն հազար/ դրամ հուղարկավորման ծախս:

Ընդամենը 215000 / երկու հարյուր տասնհինգ հազար / դրամ

ՆԱԽԱԳԻԾ

---

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ. Պալյան/

Քննարկելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ` Մեծ Պարնի համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդով օտարելու մասին և ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով Մեծ Պարնի համայնքի ավագանին

Որոշեց

1. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Բնակավայրերի բնակելի կառուցապատման , հողերից 06-075-0141-0035 ծածկագրի 0.20103 հա հողամասը օտարել աճուրդ վաճառքով` 502000 դրամ մեկնարկային արժեքով, մասնակցության վճարը 3000 դրամ, նախավճարը մեկնարկային գնի 5% -ի չափով նվազագույն քայլի չափը 5000 դրամ:
2. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Բնակավայրերի հասարակական կառուցապատման , հողերից 06-075-0118-0017 ծածկագրի 0.50196 հա, հողամասը օտարել աճուրդ վաճառքով` 1254000 դրամ մեկնարկային արժեքով, մասնակցության վճարը 3000 դրամ, նախավճարը մեկնարկային գնի 5% -ի չափով նվազագույն քայլի չափը 5000 դրամ:
3. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Բնակավայրերի բնակելի կառուցապատման , հողերից հողերից 06-075 -0141-0034 ծածկագրի 0.19925 հա, հողամասը օտարել աճուրդ վաճառքով` 446000 դրամ մեկնարկային արժեքով, մասնակցության վճարը 3000 դրամ, նախավճարը մեկնարկային գնի 5% -ի չափով նվազագույն քայլի չափը 5000 դրամ:
4. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Բնակավայրերի բնակելի կառուցապատման , հողերից 06-075-0118-0010 ծածկագրի 0.10066 հա, հողամասը օտարել աճուրդ վաճառքով` 280000 դրամ մեկնարկային արժեքով, մասնակցության վճարը 3000 դրամ, նախավճարը մեկնարկային գնի 5% -ի չափով նվազագույն քայլի չափը 5000 դրամ:
5. Մեծ Պարնի համայնքի սեփականություն հանդիսացող Բնակավայրերի բնակելի կառուցապատման , հողերից 06-075-0118-0008 ծածկագրի 0.10017 հա, հողամասը օտարել աճուրդ վաճառքով` 240000 դրամ մեկնարկային արժեքով, մասնակցության վճարը 3000 դրամ, նախավճարը մեկնարկային գնի 5% -ի չափով նվազագույն քայլի չափը 5000 դրամ: